ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Թորոսյան,

ի պատասխան Ձեր 12.12.2023թ. գրության՝ տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը ծառահատումներն իրականացրել է Երևանի քաղաքապետի 26 ապրիլի 2021թ. թիվ 1236-Ա որոշմամբ հաստատված ծառահատման տոմսերով:

Միաժամանակ՝ Կ Ուլնեցու, Մոսկովյան փողոցներում, Սայաթ-Նովայի պողոտայում հատվածային ծառահատումներն իրականացվել են համաձայն 2023թ.-ին սկիզբ առած «Երևան համայնքում կենսունակության ավարտին մոտ գտնվող և ամբողջովին դեֆորմացված ծառերի փոխարինում արժեքավոր և գեղազարդ ծառերով: Ինվազիվ ծառերի հեռացում» ծրագրի և Երևան քաղաքի ավագանու 18 նոյեմբերի 2009թ. թիվ 36-Ն որոշման համաձայն, իսկ Մերգելյանի այգում, խիստ անհրաժեշտությունից ելնելով, իրականացվել են համապատասխան մասնագիտական եզրակացություններով սանիտարական հատումներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ